


Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ



Եկեղեցիին ծնունդը



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen

Alastair Paterson

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

BFC

PO Box 3

Winnipeg, MB R3C 2G1

Canada

©2020 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Երբ Յիսուս մահացաւ, Անոր սարսափած
հետեւորդները կը պահուէին: Յիսուսի
երկինք համբարնալէն ետք Ան ինքզինք
ցոյց տուաւ իր աշակերտներուն: Յիսուս
ողջ էր: Բայց Յիսուս ծրագրած էր ձգել
անոնց, երկինք երթալու համար, ուր միշտ
կ'ապրէր մեր հօր Աստուծոյ հետ:





Նախքան
Անոր
մեկնիլը,
Յիսուս

խոստացաւ իր
հետեւորդներուն,
որ ինք Աստուծոյ Սուրբ

Յոգին պիտի դրկէ, որպէսզի իրենց օգնական
եւ հանգստացնող ըլլայ: (Յովհաննու 15,26):






Ժամանակը մօտ էր, քանի
մը օր Յիսուսի մեկնումեն ետք Աստուծոյ Սուրբ
Յոզիսն եկաւ: Աստուծոյ Սուրբ Յոզիսն եկաւ:




Այսպես եղաւ: Մօտաւորապէս Յիսուսի 120
հետեւորդներ կ'աղօթէին միասին տան մը մէջ:
Յանկարծ տունը փոթորկալի, հզօր քամիի մը
ձայնով լեցուեցաւ:



Սուր ծայրով կրակի բոցեր հանգչեցան ամեն անձի վրայ: Բոլորն ալ լեցուեցան Սուրբ Հոգիով, ինչպես որ Յիսուս խոստացած էր:



Դուրսը՝ փողոցը, Յիսուսի հետեւորդները սկսան
տարբեր լեզուներ խօսիլ, որ իրենց կեանքին մէջ
չէին խօսած:



Օտարները, որոնք երուսաղեմ կ'այցելէին լսեցին
աշակերտներուն խօսակցութիւնները, որոնք կը
պատմէին Աստուծոյ հրաշալի գործերուն մասին
զանազան լեզուներով: Այցելուները շատ
հրաշացան: "Ի՞նչ կը նշանակեր այս մէկը,
ըսին անոնք:


"Անոնք նոր
գինիով
լեցուեր են",
ծիծաղեցան
շատեր:




Սակայն Պետրոս ըսաւ. "Ասոնք գինովներ չեն...
այս էր ան, որ խօսած էր Յովել մարգարէն..." Ետքը
Պետրոս յիշեցուց, որ տարիներ առաջ, Աստուած
խոստացած էր, որ Սուրբ
Հոգին պիտի գայ եւ
օրհնէ ու օգնէ
ժողովուրդը:




Պետրոս ըսաւ, որ ժողովուրդը պէտք է ետդարձ
ընէ իր մեղքերէն եւ մկրտուի Յիսուս Զրիստոսի
անունով: "... եւ դուք պիտի ստանաք Սուրբ Հոգիին
պարգեւը", Պետրոս ըսաւ: Մօտաւորապէս 3000
հոգի հնազանդեցան:



Անոնք միացան Յիսուսի աշակերտներուն իբր
Յիսուսի պաշտող անձեր: Ժամանակի ընթացքին,
աւելի եւ աւելի մեծ թիւով մարդիկ աւելցան այն
եկեղեցիին, որ Աստուած սկսաւ այն օրը երբ Սուրբ
Հոգին եկաւ:



Սուրբ Հոգին իր ուժը բերաւ Աստուծոյ
ժողովուրդին կեանքին մէջ: Օր մը,
Պետրոս եւ Յովհաննէս միասին
տաճար գացին աղօթքի ժամուն:
Կաղ մուրացկան մը նստած էր
տաճարի դրան առջեւ: Ան
Պետրոսէն եւ Յովհաննէսէն
դրամ մը մուրաց:






Պետրոս պատասխանեց.
"Արժաթը եւ ոսկին ես
չունիմ, բայց ինչ որ
ունիմ կու տամ քեզի:
Նազարեթ Յիսուս
Քրիստոսի անունով
ոտքի ել եւ քալէ": Եւ
անոր աջ ձեռքէն բռնելով
ոտքի հանեց: Ան վեր
ցատկեց, ոտքի ելաւ եւ
տաճար մտաւ իրեն հետ
քաշելով, ցատկելով եւ
Աստուծոյ փառք տալով:



Մեծ բազմութիւն
մը հաւաքուեցաւ,
զմայլաճ հրաշքին
վրայ: Պետրոս
ըսաւ իրեն, որ
այս Աստուծոյ ուժն
եր եւ ոչ թէ իր, որ
առողջացուց այս
հաշմանդամ
մարդը:




Երբ Պետրոս յիշեցուց հրեաներուն, թէ Աստուած
Յիսուսը մեռելներէն բարձրացուց, տաճարի
առաջնորդները զայրացած ձերբակալեցին


Պետրոսը, Յովհաննէսը
եւ բանտարկեցին
զանոնք: Սակայն
5000ի չափ մարդիկ
հաւատացին
Յիսուսի:



Յաջորդ օրը Պետրոսը եւ Յովհաննէսը տաճարի կառավարիչներուն առջեւ դատավարութեան կանգնեցան: "Որո՞ւ եւ ի՞նչ ուժով եւ որո՞ւ անունով այս մէկը ըրիր", հարցուցին անոնք:



Սուրբ հոգիով լեցուած Պետրոս քաջարիօրէն
պատասխանեց: "... Նազարէթի Յիսուս Քրիստոսի
անունով, որուն դուք խաչեցիք, որուն Աստուած
մեռելներէն բարձրացուց, իրմով այս մարդը կը
կենայ ձեր բոլորին առջեւ":




Պետրոս անվախօրէն շարունակեց. "... Ուրիշ որեւէ

մէկ անուն չկայ ոչ երկնքի
մէջ, որ տրուած է մարդոց
որմով կրնանք փրկուիլ":

Կառավարիչները
որովհետեւ չէին
ուզեր ժողովուրդը
հաւատայ Յիսուսին
անոնք Պետրոսին
եւ Յովտաննէսին
վատ ձեւով
սպառնացին":

Այսպէս անդին այլեւս
մէկու մը չէք խօսիր
Յիսուսի անունով":





Անցեալին
Պետրոս կը
վախնար
Յիսուսի
մասին
իօտելու:
Սակայն այդ
Սուրբ Հոգին
գալէն առաջ
Էր: Հիմա որեւէ
մէկը չի կրնար
վախցնել զինք:






Պետրոս եւ Յովհաննէս
պատասխանեցին.


"Արդեօ՞ք ճիշդ է
ձեզի իմանալ
գան Աստուծոյ,
դուք դատեցէք:
Որովհետեւ չենք
կրնար խօսիլ,
բայց միայն ան
ինչ որ մենք
տեսանք եւ
իմացանք":



Բազմաթիվ
սպառնալիքներ են
ետք,
կառավարիչները
ազատ արձակեցին
Պետրոսը և
Յովհաննեսը:
Աստուծոյ քաջ
ծառաները
պատմեցին իրենց
ընկերակիցներուն
ամեն ինչ որ հետերնին
եղաւ բանտին և
դատարանին մէջ:



Ետքը անոնք
մեծ աղօթք
մը եւ փառքի
հանդիպում
մը ըրին: Նորէն,
Աստուծոյ Սուրբ
Յոգին լեցուց մեր
ժողովուրդը եւ
մանուկ եկեղեցին
մեծցաւ ու աճեցաւ:



Եկեղեցիին ծնունդը


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Գործք Առաքելոց 1 - 4


"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130





Կերջ

55



60



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի էաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուն համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

